

**ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/8

4 հունիսի 2014 թ.

Քննարկվեց «Վայքի Մայրուղի» ՍՊԸ 28.04.2014 թ-ի գրությամբ բերված պահանջը 2013 թ-ին ընկերությանն ավելացված արժեքի հարկ վճարող համարելու վերաբերյալ:

«Վայքի Մայրուղի» ՍՊԸ գրությունում բերված փաստարկները.

2013 թ-ին «Վայքի Մայրուղի» ՍՊԸ կողմից ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու փոխարեն սխալմամբ ներկայացրել է ՀՀ կառավարության 2011 թ-ի օգոստոսի 4-ի թիվ 1104-Ն որոշման հավելվածով սահմանված՝ որպես ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարություն:

Ելնելով վերոգրյալից՝ «Վայքի Մայրուղի» ՍՊԸ-ն խնդրում է թույլատրել 2013 թ-ին գտնվել ԱԱՀ-ի հարկման ռեժիմում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Վայքի Մայրուղի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն) իր գործունեությունը սկսել է 2013 թ-ի հունիս ամսից և նույն թվականի հուլիսի 12-ին էլեկտրոնային եղանակով Եղեգնաձորի ՏՀՏ է ներկայացրել հայտարարություն որպես ավելացված արժեքի հարկի վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին: Նշված հայտարարության ներկայացմամբ Ընկերությունն իրեն համարել է ԱԱՀ վճարող և կատարել դրանից բխող գործողություններ: Սակայն, քանի որ ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարության ներկայացումը հիմք չէ անձին ԱԱՀ վճարող համարելու համար, ուստի այդ մասին Եղեգնաձորի ՏՀՏ 09.04.2014 թ-ի թիվ 468 գրությամբ տեղեկացվել է Ընկերությանը:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ Հանձնաժողովը բազմիցս արտահայտել է իր դիրքորոշումը, որը կայանում է հետևյալում:

<Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող է համարվում, մասնավորապես, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված իրավաբանական անձը՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից, եթե անձը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, սակայն իր հաշվառման վայրի հարկային մարմնին վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով գրավոր հայտարարություն է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Հայտարարության ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2011թ. թիվ 51-Ն հրամանով (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 84-րդ ձև), որի ներկայացման դեպքում է միայն շրջանառության հարկ վճարող համարվելու

պայմաններին բավարարող անձը համարվում ԱԱՀ վճարող: Նշված հայտարարությունը չներկայացնելու դեպքում անձը չի կարող համարվել ԱԱՀ վճարող:

«ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանված է հարկային մարմնում ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը, որի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հարկային մարմին են ներկայացնում իրենց՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարություն (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 71-րդ ձև): Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու համար օրենքի պահանջ է, որ հարկ վճարողը արդեն իսկ հանդիսանա ԱԱՀ վճարող:

Ավելին, «ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանվել է, որ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարություն չեն ներկայացնում որպես ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն տված անձինք:

Ելնելով վերոգրյալից, որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարության ներկայացումը հիմք չէ անձին ԱԱՀ վճարող համարելու համար: Հաշվի առնելով, որ հայտարարություն ներկայացրած անձի՝ ԱԱՀ վճարող համարվելու օրենսդրական հիմքերը հայտարարությունը ներկայացնելու պահին հարկային մարմին հայտնի չեն, հարկային մարմինն ընդունել է ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարությունը, ինչը, սակայն, «Ավելացված արժեքի հարկի մասին» «ՀՀ օրենքի համաձայն չի նշանակում, որ հաշվառման համար հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը համարվում է ԱԱՀ վճարող:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ «ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման արդյունքում կազմված թիվ 23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով հանձնարարվել է բոլոր այն դեպքերում, երբ տնտեսավարող սուբյեկտն իր տնտեսական գործունեությունը տեղափոխել է ընդհանուր հարկման դաշտ և ցուցաբերել է բարեխիղճ հարկատուի վարքագիծ (ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները)՝ չկիրառել օրենսդրորեն նախատեսված (ընթացակարգերի խախտմամբ ԱԱՀ վճարող համարվելու համար) պատժամիջոցները:

Հիմք ընդունելով «ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման թիվ 23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով տրված հանձնարարականը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը ցուցաբերել է բարեխիղճ հարկատուի վարքագիծ՝ ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները, Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության պահանջը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» «ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» «ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Կայքի Մայրուղի» ՍՊԸ 28.04.2014 թ-ի գրությամբ բերված պահանջը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ